

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ

Ավագյան Ա. (ԵՊՀ, Հայաստան)

armphilology@ysu.am

Բանալի բառեր՝ գրականություն, ազգային ոգի, գեղագիտական իդեալ, ժողովրդական ճակատագիր, զոհողություն, ազատաբաղձություն:

Իր գոյության ավելի քան տասնվեց դարերի ընթացքում հայ գրականությունը արտացոլել է մեր ժողովրդի ունեցած մտավոր ու ոգեղեն կյանքը, որն իր մեջ ներառում է մեր համազգային բաղձանքները, գաղափարները, զգացումների ու նվիրումների ամբողջական պատմությունները՝ միշտ պատասխանելով այն հարցերին, թե ովքեր ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում:

Դարեր տևած պետականության բացակայությունը հայ գրականության վրա դրել է գերագույն մի առաքելություն՝ գրել հայ կյանքի գեղարվեստական պատմությունը, Խորենացու խոսքերով ասած «փոքր ածուխ» պատմությունը, որտեղ հիշատակման արժանի շատ գործեր կան՝ ասել է, թե՛ տալ ընտրովի, հավաստի և պատճառաբանված իրողություններ ու երևույթներ, որոնց հետագայում եկան ավելանալու ասելիքի միտումնավորությունն ու նպատակադրվածությունը:

Ամեն բանից վեր և ամեն բանից առաջ Հայրենիքն ու նրա ճակատագիրը. սա հայ գրականության առանձնահատկություններից մեկն է: Մահվան տեսիլը միշտ էլ կախված է եղել այդ հայրենիքի վրա, սակայն նրա դժվարին ճակատագիրը, որ այնքան տարուբերվել է պատմության քառուղիներում, որքան էլ զարմանալի թվա, յուրատեսակ խթան է դարձել՝ հնչեցնելու համար ապրելու ու հարատևելու պատգամներ, որ կարելի է խտացված ձևակերպել միշտ դեպի վեր, դեպի Ազատն, այսինքն՝ Արարատն բանաձևով: Այն ամենը, ինչը ազնիվ է ու

Մարդկային, իր արտացոլանքն է գտել հայ գրականության մեջ, իսկ հայ գրողը գեղարվեստական խոսքի միջոցով մեկ անգամ չէ, որ բարձրացրել է ազգային խնդիրներ շոշափող կարևոր հարցադրումներ:

Որքան էլ լավատես, հայ գրողը, ի տես արշավող բազում պարսիկների, բյուզանդացիների, Թամերլանների ու Չինգիզ խանների ստիպված եղավ խաղաղության երգերի փոխարեն հնչեցնել բողոքի ու նզովքի խոսքեր, պատկերել «գորշ օրերի տաղտկությունը» (Եղ. Չարենց):

Հայ գրականությունը քրիստոնյա ժողովրդի ստեղծած գրականություն է, ինչը նրան հաղորդել է բարու, ազնիվի, նվիրման, գեղեցիկի հատկանիշներ, այն ունի մանավանդ խաղաղասիրական բնույթ:

Հայկական լեռնաշխարհում ստեղծված պատմամշակութային ժառանգության մեծագույն կոթողներից մեկն էլ մեր էպոսն է, որ կառուցման, արդարության, սեփական հողը պաշտպանելու վեհ գաղափարներ է տարփողում:

Սկսած XX դարասկզբից, էականորեն փոխվում է մեր գրականության բովանդակության մի ստվար մասը: Ազգային աղետը, պարբերաբար կրկնվող ջարդերը իրենց կնիքն են թողնում այդ գրականության վրա, ուր այս անգամ, Ջոհրապի խոսքերով ասած «...մտքերը՝ մռայլ, բառերը դաշոյնի պէս փայլատակող, մահահոտ եւ արիւնաներկ...» պատկերներն են գերակշիռ դառնում:

Հայ գրականության համար բեկումնային մի շրջան էլ եղավ մեծամասնականների իշխանության տարիները, որ իր հետ մի կողմից բերեց գիտության, կրթության, տնտեսական զարգացումներ, մյուս կողմից, ազգային չլուծված խնդիրների առումով, առթեց մերժման ու ժխտման դիրքորոշումներ:

Իր ընդգրկումներով շատ լայն է հայ գրականության աշխարհագրական ոլորտը: Մեծ մի գրականություն էլ ստեղծվել է Հայկական լեռնաշխարհից դուրս՝ գաղութներում՝ Պոլսում, Թիֆլիսում, իսկ 1920-ից հետո՝ Սփյուռքում: Սրանցից ամեն մեկը

ցուցաբերելով հանդերձ համահայկական խնդիրներ, ունի զուտ տեղական առանձնահատկություններ, որոնց արժևորումը մեր խնդրից դուրս է:

Հայ գրականությունը գեղարվեստական վավերաթուղթ է նաև մեր օրերի համար, որ կոչումն ունի լինելու ոչ միայն հայ մարդու ոգեշնչողը, այլև դաստիարակիչը. ինչը միշտ չէ, որ պահպանվում է ժամանակակից գրականության մեջ:

Ազգային արժեքների ամեն մի ժխտողական վերաբերմունք դատապարտելի է և անընդունելի ոչ միայն ապրողներին, այլև գալիք սերունդների ազգային նկարագրով ու բարոյականությամբ օժտելու համար:

LITERATURE AS A HISTORICAL-CULTURAL AND NATIONAL VALUE

Avagyan A. (Yerevan State University, Armenia)